ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հունվարի 2024 թվականի N 104-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Թորգոմ Ժորայի Հովհաննիսյանի (ծնված 1961 թվականի հունվարի 12-ին) դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորք գյուղի 07-030-0101-0212 կադաստրային ծածկագրով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15092023-07-0151 վկայական, տրված 2023 թվականի սեպտեմբերի 15-ին) 5698,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից (վերջինովս ամբողջությամբ պարփակված), ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ձորք գյուղի 07-030-0101-0178 կադաստրային ծածկագրով 2371,4 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02112023-07-0173 վկայական, տրված 2023 թվականի նոյեմբերի 2-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 133-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Թորգոմ Ժորայի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորք գյուղի 07-030-0101-0212 կադաստրային ծածկագրով 5698,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից՝ վերջինովս ամբողջությամբ պարփակված, Ջրվեժ համայնքի Ձորք գյուղի 07-030-0101-0178 կադաստրային ծածկագրով 2371,4 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը (վարելահողը) ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով օտարել այն փաստացի տիրապետող և օգտագործող Թորգոմ Ժորայի Հովհաննիսյանին՝ կադաստրային արժեքով:

2.Սահմանել, որ հողօգտագործողը սույն որոշման ընդունումից հետո, 10-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105214176 հաշվին պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 378 239 (երեք հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր երեսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 10-օրյա ժամկետում վճարումը չկատարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ Գրիգոր Սերոբյանին սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հողօգտագործողի հետ կնքել Ջրվեժ համայնքի Ձորք գյուղի 07-030-0101-0178 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 2371,4 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի առուվաճառքի պայմանագիր:

5.Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թորգոմ Ժորայի Հովհաննիսյանին որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 22
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հունվարի 2024 թվականի N 105-Ա

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆԻ ՆԱԶԱՐԵԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.***

Քաղաքացի Հովհաննես Մելքոնի Նազարեթյանը հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ հարկերը վճարելու պարտավորությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի դեկտեմբերի 5-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով և 34-րդ հոդվածով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել էր վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

***Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.***

Համաձայն աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 22-ին տրված N 743756514089170124, N 743756517500170204, N 760756492246170239 և անշարժ գույքի հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքների՝ Հովհաննես Նազարեթյանը Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ մարել է Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող անշարժ գույքերի 2008-2023 թվականների հարկային պարտավորությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

**Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, *որոշում եմ.***

1.Քաղաքացի Հովհաննես Մելքոնի Նազարեթյանի նկատմամբ 2023 թվականի դեկտեմբերի 5-ին հարուցված վարչական վարույթը կարճել:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջրվեժ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:

4.Որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Հովհաննես Մելքոնի Նազարեթյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 22
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2024 թվականի N 106-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Դավիթ Վարդգեսի Կարապետյանի (ծնված 1983 թվականի ապրիլի 22-ին) կողմից Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 203-րդ թաղամասի թիվ 13 հասցեում գտնվող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 10082023-07-0146, տրված 2021 թվականի ապրիլի 19-ին) 800,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին կից, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող, իր կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 203-րդ թաղամասի թիվ 13/1 հասցեում գտնվող՝ 81,1 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09012024-07-0047 վկայական, տրված 2024 թվականի հունվարի 9-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 134-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Դավիթ Վարդգեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 203-րդ թաղամասի թիվ 13 հասցեում գտնվող 800,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին կից՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 203-րդ թաղամասի թիվ 13/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, իր կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող 81,1 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Դավիթ Վարդգեսի Կարապետյանին՝ կադաստրային արժեքով:

2.Սահմանել, որ հողօգտագործող Դավիթ Վարդգեսի Կարապետյանը, սույն որոշման ընդունումից հետո, 10-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221171 հաշվին պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 554 262 (հինգ հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 10-օրյա ժամկետում վճարումը չկատարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ Գրիգոր Սերոբյանին՝ հողօգտագործող Դավիթ Վարդգեսի Կարապետյան կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

5.Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Դավիթ Վարդգեսի Կարապետյանին որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 22
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2024 թվականի N 107-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարդիրոս Բողոսի Մոխթարյանսի (ծնված՝ 1951 թվականի հունիսի 22-ին) լիազոր ներկայացուցիչ Արտակ Սամվելի Ստեփանյանի (ծնված՝ 1984 թվականի օգոստոսի 3-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Մարդիրոս Բողոսի Մոխթարյանսին պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորավան թաղամասի թիվ 11 հասցեի բնակավայրերի խառը կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25082023-07-0160 վկայական, տրված 2023 թվականի օգոստոսի 25-ին, անհատ ձեռնարկատեր Հակոբ Մարգարյանի կողմից 2023 թվականի օգոստոսի 22-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Հակոբ Մարգարյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Մարդիրոս Բողոսի Մոխթարյանսին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորավան թաղամասի թիվ 11 հասցեի բնակավայրի խառը կառուցապատման հողամասում 2017-2018 թվականներին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 48,9 քառ.մետր, թիվ 2 օժանդակ շինությունը՝ 5,5 քառ.մետր, թիվ 3 լողավազանը՝ 36,0 քառ.մետր, թիվ 4 շվաքարանը՝ 19,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև առկա են ինքնակամ բացված երկու դուռ և երկու պատուհան:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Մարդիրոս Բողոսի Մոխթարյանսին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորավան թաղամասի թիվ 11 հասցեի բնակավայրի խառը կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների, ինքնակամ բացված երկու դռների և երկու պատուհանների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Մարդիրոս Բողոսի Մոխթարյանսին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորավան թաղամասի թիվ 11 հասցեի բնակավայրի խառը կառուցապատման հողամասում 2017-2018 թվականներին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 48,9 քառ.մետր, թիվ 2 օժանդակ շինությունը՝ 5,5 քառ.մետր, թիվ 3 լողավազանը՝ 36,0 քառ.մետր, թիվ 4 շվաքարանը՝ 19,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև ինքնակամ բացված երկու դռները և երկու պատուհանները, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 206 588 (երկու հարյուր վեց հազար հինգ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մարդիրոս Բողոսի Մոխթարյանսին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2024 թվականի N 108-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Միքայել Հովհաննեսի Գասպարյանի (ծնված՝ 1992 թվականի ապրիլի 18-ին) լիազոր ներկայացուցիչ Հովհաննես Մելիքսեթի Գասպարյանի (ծնված՝ 1968 թվականի մայիսի 26-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Միքայել Հովհաննեսի Գասպարյանին պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքի 1-ին այգետարածքի 10-րդ թաղամասի թիվ 4 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27032012-07-0101 վկայական, տրված 2012 թվականի մարտի 27-ին, անհատ ձեռնարկատեր Արամ Աջաբխանյանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 12-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2023U29JMF, մուտքագրված 2023 թվականի հոկտեմբերի 12-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Արամ Աջաբխանյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Միքայել Հովհաննեսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքի 1-ին այգետարածքի 10-րդ թաղամասի թիվ 4 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2013 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 206.5 քառ.մետր, թիվ 2, 3 ծածկերը՝ ընդհանուր 40,4 քառ.մետր, թիվ 4 լողավազանը՝ 44,9 քառ.մետր և թիվ 5 պարիսպը՝ 3,4 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11 և 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Միքայել Հովհաննեսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքի 1-ին այգետարածքի 10-րդ թաղամասի թիվ 4 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Միքայել Հովհաննեսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքի 1-ին այգետարածքի 10-րդ թաղամասի թիվ 4 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 166-րդ թաղամաս, թիվ 4:

2.Միքայել Հովհաննեսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 166-րդ թաղամասի թիվ 4 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2013 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 206,5 քառ.մետր, թիվ 2, 3 ծածկերը՝ ընդհանուր 40,4 քառ.մետր, թիվ 4 լողավազանը՝ 44,9 քառ.մետր և թիվ 5 պարիսպը՝ 3,4 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 511 390 (հինգ հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Միքայել Հովհաննեսի Գասպարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2024 թվականի N 109-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սլավիկ Վարդգեսի Կարապետյանի (ծնված՝ 1951 թվականի դեկտեմբերի 17-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 6 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02082019-07-0051 վկայական, տրված 2019 թվականի օգոստոսի 2-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 6-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2022RB6QDE, մուտքագրված 2022 թվականի մարտի 14-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Սլավիկ Վարդգեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 6 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2021 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 4 ավտոտնակը՝ 42,54 քառ.մետր և թիվ 5 պարիսպը՝ 2,7 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Սլավիկ Վարդգեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 6 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Սլավիկ Վարդգեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 6 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2021 թվականին ինքնակամ կառուցված թիվ 4 ավտոտնակը՝ 42,54 քառ.մետր և թիվ 5 պարիսպը՝ 2,7 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 87 024 (ութսունյոթ հազար քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սլավիկ Վարդգեսի Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 23
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2024 թվականի N 110-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.«Կառլենա Շին» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ տնօրեն Արթուր Կառլենի Սահակյան, տալ մինչև երկու ստորգետնյա և մինչև յոթ վերգետնյա հարկերով բնակելի համալիրների կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լճափի փողոցի թիվ 1/3 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել «Կառլենա Շին» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ տնօրեն Արթուր Կառլենի Սահակյան, շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «Կառլենա Շին» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ տնօրեն Արթուր Կառլենի Սահակյան, որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունվարի 2024 թվականի N 111-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանբ հաստատված կարգի 50 և 62-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Հռիփսիմե Արայիկի Հասրաթյանի լիազոր անձ Լիլիթ Յուրիի Ղազարյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Հռիփսիմե Արայիկի Հասրաթյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մուշ այգեգործական զանգված, թիվ 8 հասցեի՝ 592,9 քառ.մետր և մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մուշ այգեգործական թաղամաս, թիվ 7 հասցեի՝ 594,0 քառ.մետր մակերեսներով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մուշ այգեգործական թաղամաս, թիվ 8:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հռիփսիմե Արայիկի Հասրաթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«24» հունվարի 2024 թվականի N 112-Ա

## ՏԱԹԵՎԻԿ ԿԱՐՈՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի թիվ 45 տան բնակիչ Տաթևիկ Կարոյի Հակոբյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է հինգ անձից, Տաթևիկ Հակոբյանի ամուսինը՝ Վարազդատ Անդրանիկի Սարգսյանը, ծնված՝ 1998 թվականին, չունի մշտական աշխատանք, ամուսնու հայրը՝ Անդրանիկ Վարազդատի Սարգսյանը, ծնված՝ 1975 թվականին, ով ունի առողջական խնդիրներ, մայրը՝ Լուսինե Գալստյանը, ծնված՝ 1978 թվականին, ով խնամում է նրանց հետ նույն հարկի տակ բնակվող՝ ամուսնու հորաքրոջը՝ Օլգա Վարազդատի Սարգսյանին, ծնված՝ 1964 թվականին, ով գտնվում է ծայրահեղ ծանր առողջական վիճակում, բժիշկների մշտական հսկողության տակ է, բուժումը շարունակելու համար անհրաժեշտ է թանկարժեք դեղորայք և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Տաթևիկ Կարոյի Հակոբյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Տաթևիկ Կարոյի Հակոբյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Տաթևիկ Կարոյի Հակոբյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունվարի 2024 թվականի N 113-Ա

## ՀԵՐՄԻՆԵ ՄԻԽԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 8-րդ փողոցի թիվ 24 տան բնակիչ Հերմինե Միխակի Կարապետյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է 5 անձից, Հերմինե Կարապետյանի ամուսինը՝ Քաջվան Սլավիկի Կարապետյանը, ծնված՝ 1978 թվականին, ունի առողջական խնդիրներ, գտնվում է բժիշկների մշտական հսկողության տակ, ունի ֆունկցիոնալության սահմանափակման ծանր աստիճան, նրանց խնամքի տակ է անչափահաս տղան՝ Հայկազ Քաջվանի Կարապետյանը, ծնված՝ 2007 թվականին և չափահաս տղան՝ Սլավիկ Քաջվանի Կարապետյանը, ծնված՝ 2003 թվականին, ով ուսանող է և չի աշխատում, նրանց հետ նույն հարկի տակ բնակվում է ամուսնու մայրը՝ Ամաս Սանդրոյի Կարապետյանը, ծնված՝ 1956 թվականին և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Հերմինե Միխակի Կարապետյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Հերմինե Միխակի Կարապետյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հերմինե Միխակի Կարապետյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 24
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2024 թվականի N 114-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Մարինե Էնգելսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 18-րդ փողոցի թիվ 17 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ պոլիկլինիկայի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4.Շինարարության թույլտվություն կտրամադրվի աշխատանքային նախագծում ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմանների առկայության դեպքում:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մարինե Էնգելսի Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

25 հունվարի 2024 թվականի N 115-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Անուշ Միշայի Անտոնյանին և Տիգրան Արթուրի Հովհաննիսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 46/1 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4.Շինարարության թույլտվություն կտրամադրվի աշխատանքային նախագծում ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմանների առկայության դեպքում:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Անուշ Միշայի Անտոնյանին և Տիգրան Արթուրի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 25
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«25» հունվարի 2024 թվականի N 116-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 115-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման N 28122023-07-0091 վկայականը, տրված 2023 թվականի դեկտեմբերի 28-ին և հաշվի առնելով «ՖՈՐՁԱ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արփինե Միշայի Բեգլարյանի խնդրանքը, ***որոշում եմ***.

1.Թույլատրել «ՖՈՐՁԱ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ տնօրեն Արփինե Միշայի Բեգլարյան, շարունակելու սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 43 հասցեի հողամասում 2023 թվականին հուլիսի 21-ի թիվ 160 շինարարության թույլտվությամբ տրված թվով վեց կցաշարային առանձնատների կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «ՖՈՐՁԱ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արփինե Միշայի Բեգլարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հունվարի 2024 թվականի N 117-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Վարդան Գերասիմի Գրիգորյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Վարդան Գերասիմի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 3-րդ փողոցի թիվ 14 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորից բաժանված կառուցապատված 962,2 քառ.մետր մակերեսով թիվ 1 առանձնացվող հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 3-րդ փողոց, թիվ 14, թիվ 2 առանձնացվող հատվածին՝ 210,0 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 3-րդ փողոց, թիվ 14/1:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Վարդան Գերասիմի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 26
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հունվարի 2024 թվականի N 118-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 62-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Ստեփան Գեղամի Ալոյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Ստեփան Գեղամի Ալոյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Այգեգործական զանգված, թիվ 32 հասցեի՝ 07-042-0216-0016 կադաստրային համարի 610,0 քառ.մետր մակերեսով (հիմք՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, տրված 2024 թվականի հունվարի 19-ին), հողակտորը վերահասցեավորել և վերահասցեավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 216-րդ թաղամաս, թիվ 17:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ստեփան Գեղամի Ալոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 26
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունվարի 2024 թվականի N 119-Ա

## ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետով և հաշվի առնելով Արմեն Երվանդի Սանթրոսյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Արմեն Երվանդի Սանրթոսյանին և Անի Արթուրի Օսիպյանին՝ շարունակելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 19-րդ փողոցի թիվ 30 հասցեի հողամասում 2022 թվականի փետրվարի 24-ի թիվ 29 շինարարության թույլտվությամբ տրված նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան վերակառուցման և ընդլայնման, ավտոտնակի, պահակակետի, լողավազանի, ամառային խոհանոցի և քարե պարիսպի կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն փոփոխված նախագծի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արմեն Երվանդի Սանրթոսյանին և Անի Արթուրի Օսիպյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թ. հունվարի 26
գ. Ջրվեժ